սուրբ ճգնաւորները անգամ գայթակղեցնել եւ սատանայի աշակերտ ընել: Անկելինայ նոր ելած անկողնեն բեհեզներու եւ ազնիւ մուշտակներու ծածկուած փափուկ բազմոցի մը վրայ ընկողմանեալ էր, երբ եղբայրը՝ Թումայ ներս մտաւ:

— Ես կ'ուզէի քեզ տեսնել, եղբայր,— ըսաւ Տիկինը,— շատ հարկաւոր խօսք ունէի քեզ ըսելու:

— Ի՞նչ է արդեօք այդ հարկաւորը՝ շատ հետաքրքիր եմ իմանալու:

— Հարկաւորն այն է, որ դու այդ հայ աղջիկը բոլորովին ինձ պիտի թողուս:

— Միթէ՛ քեզ թողած չեմ, դու իր տիրուհին չե՞ս:

— Ոչ, իմ խօսքս չես ուզէր իմանալ. այդ աղջիկը գիտեմ ինչ նպատակաւ յափշտակէր ես, բայց այդ նպատակդ պէտք է մոռնաս:

— Հիմա որ աղջիկը հասաւ, դու էլ ինձմէ՞ կ'ուզես յափշտակել,— ըսաւ ծիծաղելով Թումայ,— այդ անկարելի բան է, այդ պզտի բարբարոսը այնպիսի աչքեր ունի, որոց նմանը բոլոր Կոստանդնուպոլիս կ'արեւի չէ գտնել:

— Ահա այդ բանին համար, որ այնպիսի աչքեր ունի, դու պէտք է իրմէ հրաժարիս բոլորովին:

— Այս ի՞նչ կը նշանակէ, այս ի՞նչ բռնութեամն է, Անկելինայ. դու իմ պզտի քոյրս, որ այնչափ խնամքով, այնչափ հոգերով, այնչափ զոհողութեամբ այս վիճակը հասուցի, այս հրամայական ձեւերը ինձի՞ հետ նաեւ կը գործածես. երկանդ հետ մինչեւ հիմա: վարուեցար ինչպէս ուզեցիր, խեղճ մարդը բաւական չէ, որ գերի ես ըրեր, հիմա զիս էլ կ'ուզես հար եւ նման գերի ընել եւ ոտքերուդ տակ ճզմել: Բայց մտածէ, լաւ մը չափէ, որ իմ անունս Փիլակրիոս չէ…

— Գիտեմ թէ քու անունդ Թումայ է, գիտեմ նաեւ թէ ո՛ւր կը հասնի քու սրտիդ ազնուութիւնը, բայց իմ անունս էլ Անկելինայ է,— ըսաւ Տիկինը հեգնութեան ծիծաղով: Եւ յանկարծ կերպարանքը փոխելով՝ շտկուելով եւ սլաքի պէս աչքերը փայլեցնելով,— ի՜նչ եւ ո՛ւմ կը պարծիս թէ խնամք, հոգ եւ զոհողկթիւն ունեցեր ես իմ վրաս, եւ այս վիճակի ես հասուցեր. քու շահուդ համար՝ քեզի պատուանդան շինելու համար իմ գեղեցկութիւնս, իմ մարմինս, զիս՝ որբ քոյր մը՝ առիր սնուցիր, ինչպէս այդ որբ թշուառ աղջիկը քու ապագայ անարգ պագշոտութեանց յագուրդ պատրաստեցիր: Երանի թէ քեզ նման եղբայր չունենայի, եւ գեղացի աղջիկ մը պարզ ու համեստ մնայի: